ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի 3-րդ եռամսյակում №0180/GArm/18_2.2_00/10.07.18 ծածկագրով իրականացված «ԱՀՀ 105-490 տեսակի պոմպեր (էլեկտրական շարժիչով հենարանային շրջանակի վրա)» գործարքի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2019

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ:

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2019 թվականի փետրվարի 11-ից մինչև 2019 թվականի մարտի 15-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«ЦНС 105-490 տեսակի պոմպեր (էլեկտրական շարժիչով հենարանային շրջանակի վրա)» մրցույթ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն՝ համաձայն 2018 թվականի հուլիսի 10-ի №0180/GArm/18_2.2_00/10.07.18 ծածկագրով բաց առաջարկների հարցման հանձնաժողովի որոշմամբ հաստատված հրավերի, 2018 թվականի հուլիսի 11-ին կապիտալ նորոգման պլանի նախագծով Աբովյանի ԳՍՊԿ-ում նախատեսված աշխատանքների իրականացման համար բաց առաջարկների հարցումով հայտարարել է «ՆՀՍ 105-490 տեսակի պոմպեր (էլեկտրական շարժիչով հենարանային շրջանակի վրա)» մրցույթ՝ մրցութային հայտերի ներկայացման ժամկետ սահմանելով մինչև 2018 թվականի հուլիսի 19-ը: Մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը: Պայմանագրի առավելագույն գինը՝ 13,98 մլն ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Հայտարարությունը ընկերության կայքում և ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2018 թվականի հուլիսի 11-ին:

Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել 6 մասնակից՝ «Մամլիչ ՆԿ», «Димитровградхиммаш-экспорт», «Рутекс-Рус», «Гидромаш-холдинг», «Ясногорские насосы» և «Энвиогруп» ՍՊԸ-ները:

«Ясногорские насосы» և «Рутекс-Рус» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից անմիջապես մերժվել են՝ նրանց կողմից ներկայացված գնային առաջարկները բաց առաջարկների հարցման փաստաթղթերով սահմանված առավելագույն արժեքը գերազանցելու պատճառով:

Մյուս 4 հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել են մրցութային պայմաններին բավարար: Համաձայն գնահատման չափանիշների՝ հայտերը դասակարգվել են հետևյալ կերպ.

	Ընկերության անվանում	Ներկայացված գնային առաջարկները մլն ՀՀ դրամ, առանց ԱԱՀ
1	2	3
1	«Մամլիչ ՆԿ» ՍՊԸ	10,8
2	ООО «Димитровградхиммаш-экспорт»	13,62
3	ООО «Энвиогруп»	12,06
4	АО «Гидромаш-холдинг»	12,43

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 2018 թվականի հուլիսի 25-ի նիստի №4 արձանագրությամբ հաղթող է ճանաչել «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ին՝ որպես հրավերի պահանջներին համապատասխանող և գնային տեսանկյունից առավել ընդունելի առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ հուլիսի 25-ին կնքվել է պայմանագիր՝ 10,8 մլն ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ն, արժեքով:

№0180/GArm/18_2.2_00/10.07.18 ծածկագրով իրականացված «ЦНС 105-490 տեսակի պոմպեր (էլեկտրական շարժիչով հենարանային շրջանակի վրա)» առաջարկների բաց հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ.

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. Նախքան մրցույթ հայտարարելն Ընկերությունն իրականացրել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
3. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող, գնային տեսանկյունից առավել ընդունելի առաջարկ ներկայացրած մասնակիցը:
4. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանումը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գնման անվանումը ԼՀՀ 105-490 տեսակի պոմպեր (էլեկտրական շարժիչով հենարանային շրջանակի վրա)

Գնման ծածկագիրը №0180/GArm/18_2.2_00/10.07.18

Գնման ձևը Բաց առաջարկների հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☑	☐	☐	
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☐	☑	☐	
6	Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը	☑	☐	☐	

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
7	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☑	☐	☐	
8	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	
9	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐	

10	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐	
11	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	☑	☐	☐	
12	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐	
13	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
14	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
15	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	
16	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
17	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
18	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☑	☐	☐	
19	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☑	☐	☐	
20	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☑	☐	☐	